ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մայիսի 2021 թվականի N 59-Ա

ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ արտահերթ ընտրությունների քարոզչական պաստառները փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) 3-րդ փողոցի թիվ 1 հասցեի հարակից տարածքի պատ, 16 քառակուսի մետր,

2) 1-ին փողոցի և 1-ին փողոցի 2-րդ փակուղու հատման հարակից տարածքի պատ, 16 քառակուսի մետր:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի մայիսի
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մայիսի 2021 թվականի N 60-Ա

ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի մայիսի 21-ին ժամը 11:00-ին հրավիրել Գետամեջ համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով.

1) Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Գետամեջ համայնքի 6-րդ փողոցի լուսավորության ցանցի կառուցում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտը հաստատելու մասին

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 45-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի մայիսի
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հունիսի 2021 թվականի N 61-Ա

ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և 51-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Համայնք Գետամեջ 10 փողոց թիվ 52 կիսանկուղ հասցեում գտնվող Մարատ Աշոտի Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասը և շինությունը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 29052018-07-0005, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0217-0034/ վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 10-րդ փողոց N 37:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի հունիսի
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հունիսի 2021 թվականի N 62-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի «ա)» և «բ)» ենթակետերով, հիմք ընդունելով Մարատ Համբարձումյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Համարել օրինական Մարատ Աշոտի՝ Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 10-րդ փողոցի 37-րդ հասցեի բնակելի կառուցապատման հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0217-0034) ինքնակամ՝ 2020 թվականին կառուցած բնակելի տունը՝ 140,06 քառակուսի մետր, աստիճանավանդակը՝ 8,98 քառակուսի մետր և պարիսպը՝ 9,43 քառակուսի մետր արտաքին մակերեսներով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Ինքնակամ շինությունների օրինականացման վճարները սահմանված են հետևյալ հաշվարկներով.
1) բնակելի տան յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար՝ 1 422 (մեկ հազար չորս հարյուր քսաներկու) դրամ.
2) օժանդակ շինության յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար՝ 854 (ութ հարյուր հիսունչորս) դրամ:
4. Հաշվի առնելով, որ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ շինությունները կառուցվել է 2001 թվականի մայիսի 15-ից հետո, օրինականացման համար Գետամեջի համայնքապետարանի 900115000094 հաշվեհամարին վճարել 220 000 (երկու հարյուր քսան հազար) դրամ:
5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարատ Աշոտի Համբարձումյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի հունիսի 01-ին
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հունիսի 2021 թվականի N 63-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 22.1-ին հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշումով և հիմք ընդունելով Աշոտ Կարապետյանի ներկայացրած հայտը՝ ***որոշում եմ.***

1. Աշոտ Կարապետյանին համայնք Գետամեջ 2-րդ փողոց 4-րդ փակուղի թիվ 14 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0004-0032) բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար տալ նախագծման թույլտվություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի հունիսի 1-ին
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 64-Ա

ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Համայակ, Օլյա, Լուսինե և Արման Պապիկյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասին և շինությանը /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 1152127, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0015-0024/ տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 3-րդ փողոց 3-րդ փակուղի տուն N 7:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի հունիսի 01
գ.Գետամեջ